

Հայտարարություն

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն, ՀՀ Վայոց ձորի մարզի «Ազատեկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Արինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «Զեդեայի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կուլեգիալ կառավարման մարմնի միացյալ խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ Վայոց ձորի մարզի Զեդեայի հիմնական դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- ՀՀ քաղաքացիությունը.
- ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր).

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

- դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
- ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
- հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
- տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
- Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են ՀՀ Վայոց ձորի մարզի Զեդեայի հիմնական դպրոցում 2022 թվականի մարտի 28-ից մինչև ապրիլ 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև ժամը 15-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի մայիսի 3-ին՝ ժամը 11-ին, ՀՀ ՎՁՄ «Զեդեայի հմ/դ» ՊՈԱԿ-ում:

Հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, գ. Զեդեա, փողոց 1, շենք 9:

Տեղեկությունների համար դիմել կառավարման խորհրդի անդամ՝ Ջուլիետա Փանոսյանին:

Հեռ. +37494-51-83-65, էլ. Փոստ՝ julieta.panosyan@mail.ru